



ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեմա՝ Մեթոդաբանական գիտելիքների իմացության
կարևորությունը մանկավարժական հետազոտությունների
իրականացման գործընթացում

Հետազոտող ուսուցիչ՝ Աստղիկ Այվազյան

Արմավիրի մարզի Արգինայի միջնակարգ դպրոց

Մենթոր ուսուցիչ՝ Նարինե Վասիլյան

ԱՐՄԱՎԻՐ - 2022



Բովանդակություն

1. Ներածություն	3-4
2. Գրականության ակնարկ	5
3. Մեթոդաբանական գիտելիքների իմացության կարևորությունը մանկավարժական հետազոտությունների իրականացման գործընթացում	6-8
4. Մեթոդներ և հնարներ	9-15
5. Ուսման կազմակերպման եղանակները	16-20
6. Եզրակացություն	21
7. Գրականության ցանկ	22



Ներածություն

Մեր օրերում կյանքի բոլոր ոլորտներում տեղի են ունենում մի շարք փոփոխություններ: Բնականաբար դրանք կապված են հասարակության զարգացման արդի պահանջների, բարձր տեխնոլոգիաների ներդրման, գիտատեխնիկական զարգացման աննախադեպ արագության, ժողովրդագրական փոփոխությունների, աշխարհագրական տեղաշարժերի հետ: Մարդկային հասարակությունը միտում ունի զարգացման, իսկ վերջին ժամանակներում այն աննախադեպ արագընթաց զարգացում է ապրում:

Արդի պահանջներին համահունչ անընդհատ տեղի են ունենում նաև կրթության բնագավառում փոփոխություններ: Ուսուցման ավանդական ձևերից հրաժարումը, հեռահաղորդակցման տեխնոլոգիաների կիրառումը, համագործակցային ուսումնառությանը և ստեղծագործական մտածողությանը նպաստող ռազմավարությունները, համաաշխարհային կրթական կառույցներին ինտեգրումը թելադրում են կրթական նոր քաղաքականություն: Կրթության դերի արժևոճումը պահանջում է ուսուցման նոր տեխնոլոգիաների և կազմակերպական ճկուն ձևերի որոնում, կրթության և դաստիարակության որոշ սկզբունքների վերանայում, անձնակենտրոն մոտեցման ակտիվ ձևերի ու միոջների ներդրում: Այս փոփոխություններով պայմանավորված՝ ընդլայնվում են կրթադաստիարակչական հաստատությունների հետազոտական գործառույթները: Սկզբունքորեն կարևոր է, որոնել, ստեղծել, նորացնել փորձարարությամբ հիմնավորել ուսուցման բովանդակությունն ու ձևերը, իրականացնել որոնողական-փորձարարական հետազոտական գործունեություն հասարակության՝ օրեցօր աճող կրթական պահանջմունքները բավարարելու համար: Առանձնահատուկ արդիականություն են ձեռք են բերում մանկավարժական հետազոտությունների արդյունքների՝ պրակտիկայում արդյունավետ ներդրման հարցերը՝ կապված կրթական քաղաքականության արդի զարգացումների և գերակայությունների հետ: Պարզ երևում է, որ հետազոտական կարողությունների, մանկավարժական հետազոտության մեթոդաբանության,



սկզբունքների, մեթոդների տիրապետումն անհրաժեշտ է ոչ միայն գիտնականների, այլև ուսումնական հաստատությունների ղեկավարներին, պրակտիկ մանկավարժներին, որոնք գիտահետազոտական-ստեղծագործական որոնումներ են իրականացնում պրակտիկ գործունեության ընթացքում: Հետազոտական որոնումները օգնում են գիտակցել կրթության և դաստիարակության խնդիրներն և նպատակները, սոցիալական իրավիճակները, յուրացնել նորագույն տեխնոլիաները, գտնել մանկավարժության հոգեբանության և հարակից այլ գիտությունների նվաճումներ համադրման նոր եղանակներ, վերլուծել հաջողություններն ու թերությունները, կանխատեսել հեռանկարները, տեսնել տեսնել անելիքները և առաջնահերթությունները, տիրապետել փորձարարական հետազոտության ձևերին ու մեթոդներին:

Մանկավարժական հետազոտությունների մեթոդաբանությունը նպատակաուղղված է մանկավարժական հետազոտությունների անցկացման տեսական ու գործնական հարցերի ուսումնասիրմանը և կոչված է ապագա մասնագետների մեջ ձևավորելու գիտահետազոտական կարողություններ, մեթոդաբանական մշակույթ, ծանոթացնելու հետազոտության տեսական և էմպիրիկ մեթոդներին, մանկավարժական հետազոտությունների գիտական հասկացություններին, իրականացման մեթոդիկային և այլն: Մանկավարժական հետազոտությունների անցկացման մեթոդաբանության ուսումնասիրման գործընթացում հիմնավորում են մանկավարժական պրակտիկայում հետազոտության արդյունքների ուղիներ:¹

¹ Ասատրյան Լ., Հակոբյան Գ., Մանկավարժական հետազոտությունների մեթոդաբանություն, Ե., 2011 թ., 178 էջ, էջ 7:



ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ

Կրթության տեսության ոլորտում վերջերս կատարված մի շարք ուսումնասիրություններ նվիրված են ուսումնառողների մոտ նկատվող ճանաչողական ոճերի միջև տարբերություններին: Ուսուցիչների մեծամասնությունը համոզված է, որ եթե դասերը կառուցվեն, հաշվի առնելով ուսանողների ընկալման և ճանաչման տարբեր ոճերով բնութագրվող կարիքները, ավելի դրական տեղաշարժ կստեղծվի, և, հետևաբար, կբարձրանան արդյունքները:

Վերջին տարիներին հաճախ են հակադրում ուսուցման ավանդական եւ ինտերակտիվ մեթոդները, ուսուցչակենտրոն և աշակերտակենտրոն մոտեցումները: Ընդ որում՝ այդ հակադրումը կատարվում է այն համատեքստում, որ ինտերակտիվ և աշակերտակենտրոն մոտեցումները բացարձակապես լավն են, իսկ ավանդական և ուսուցչակենտրոն մոտեցումները՝ վատը: Այս մոտեցումը գիտականորեն հիմնավորված չէ: Ինտերակտիվ մոտեցումներն անհրաժեշտ են աշակերտներին մոտիվացնելու, ուսուցումը հետաքրքիր ու մասնակցային դարձնելու համար: Բայց այդ ամենը չեն բացառում նաև ավանդական մոտեցումների օգտագործումը: Հարց ու պատասխանը, նյութը վերհիշելը, վարժանքները, ուսուցչի բացատրական խոսքը այսօր էլ կարևոր են ու անհրաժեշտ ուսուցման համար: Բացի այդ՝ ինտերակտիվ ուսուցումն ունի որոշակի ռիսկեր, որոնք անտեսել չի կարելի: Օրինակ՝ խմբային աշխատանքների ժամանակ որոշ աշակերտներ «գլուխ են պահում»²: Արտաքուստ թվում է, թե երեխաներն ակտիվ են, բայց վերջում պարզվում է, որ մնացորդային գիտելիքների մակարդակը ցածր է:

² Ուսուցման արդյունավետ հնար, Երևան Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ, Հայաստան 2020



Մեթոդաբանական գիտելիքների իմացության

կարևորությունը մանկավարժական հետազոտությունների

իրականացման գործընթացում

Այսօր անհնար է պատկերացնել ուսուցումը առանց մեթոդների կիրառման: Բնարկե հնարավոր է, որ դրանք լինեն արդարացված և չարդարացված: Այսօր բազմաթիվ հիմնական մեթոդական նորարարություններ կապվում են ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառման հետ: Ուսուցումը ինչ-որ իմաստով նշանակում է փոխանցել կամ գրույցի, երկխոսության մեջ գտնվել ինչ-որ մեկի կամ համակարգչի հետ: Այսպիսով, ժամանակակից ուսուցումը առաջին հերթին ուսուցում է երկխոսության միջոցով: Այն ուսուցողական տեխնոլոգիա է՝ հիմնված խմբի անդամների փոխազդեցության և ուսումնառության խնդիրների լուծման, սովորողի ազատության վրա: Իմ աշխատանքում ես ընդհանուր պատկերացում եմ տալիս փոխներգործության մեթոդների մասին, իսկ այնուհետև ներկայացնում եմ առանձին-առանձին փոխներգործության տեսակները: Ժամանակակից ուսուցման հիմնական բնութագրիչներից մեկը ուսուցման համապատասխան միջավայրն է, որտեղ երեխան զգում է իր մասնակցության և անձի կարևորությունը, ինչը ուսուցման գործընթացը դարձնում է արդյունավետ: Ժամանակակից ուսուցման էությունն այն է, որ բոլոր սովորողները ընդգրկվում են ուսումնառության մեջ³: Ընդ որում, յուրաքանչյուրն իր անհատական ներդրումն է անում, տեղի է ունենում գիտելիքների, մտքերի փոխանակում: Ի դեպ, դա իրականացվում է բարյացակամության և փոխօգնության մթնոլորտում, որը նպաստում է ոչ միայն նոր գիտելիք ստանալուն, այլև զարգացնում է իմացական գործընթացը՝ այն բերելով ավելի բարձր մակարդակի՝ համագործակցային ձևի: Ժամանակակից մեթոդները բացառում են որևէ մեկի

³ . Краевский, В. В. Методология педагогического исследования: Пособие для педагога-исследователя / В. В. Краевский. - Самара, 1994, ст 38.



«ԱՐՄԻՆՈՒՆ» առաջնայնությունը, գերակայությունը մյուսների, ինչպես նաև մի տեսակետի գերակշռությունը մյուսների նկատմամբ: Այսպիսի ուսուցման ընթացքում աշակերտները սովորում են քննադատաբար մտածել, տեղեկատվության վերլուծության հիման վրա բարդ պրոբլեմներ լուծել, ինչպես նաև քննարկել այլընտրանքային տեսակետներ, ընդունել կշռադատված որոշումներ, մասնակցել բանավեճերի և այլն: Դասերի ընթացքում կազմակերպվում են անհատական, խմբային, գույգերով աշխատանք, կիրառվում են հետազոտական ծրագրեր, դերային խաղեր, փաստաթղթերի և սկզբնաղբյուրների հետ աշխատանք, ստեղծագործական գործունեություն և այլն: Կառուցողական մանկավարժությունն ընդհանուր հասկացություն է: Այն ոչ թե մեթոդ է, այլ մոտեցում, որը հիմնված է այն ենթադրության վրա, որ անհատն իր գիտելիքները ձևավորում (գարգացնում) է՝ ակտիվորեն մասնակցելով ճանաչողական գործընթացին: Այս մտավոր գործընթացի համար անհրաժեշտ է նաև, որ աշակերտը համագործակցի մյուսների հետ: Պարզեցված և համակարգված ուսումնական ծրագիրն աշակերտին չի կարող նման փորձառություն տալ, մինչդեռ իրական իրավիճակները կարող են: Խիստ կարևոր է համընդգրկուն ուսումնական միջավայրի ստեղծումը: Տեղեկատվության աղբյուրն այլևս գրքերն ու ուսուցիչները չեն, այլ իրական կյանքը: Խմբային աշխատանքի միջոցով աշակերտները հնարավորություն ունեն իրական կյանքին նմանեցված իրավիճակներում որոնելու իրական խնդիրների լուծումներ՝ օգտագործելով տարբեր ձևեր և տարատեսակ եղանակներ: Կառուցողական մանկավարժության համար անհրաժեշտ են ուսման հատուկ պայմաններ, որոնք հնարավորություն կտան աշակերտներին համագործակցելու և օգնություն ցուցաբերելու միմյանց:⁴ Նրանք կարող են օգտվել մի շարք գործիքներից և տեղեկատվության աղբյուրներից՝ իրենց խնդիրները լուծելու և նպատակին հասնելու համար: Անհատական համակարգիչներով կահավորված դասարաններում կարող են կիրառվել մի շարք

⁴ Скаткин М.Н. Методология и методика педагогических исследований (В помощь начинающему исследователю). – М.:Педагогика, - 1986. -152с.



մանկավարժական մեթոդներ և ուսման եղանակներ (ինչպես օրինակ՝ խնդրի լուծմանն ուղղված և նախագծերի վրա հիմնված ուսուցում): Անհատական համակարգիչներով համալրված դասարանները շատ ավելի հարմար են ուսման ժամանակակից եղանակներ կիրառելու համար, քան ավանդական դասասենյակները, նույնիսկ եթե մեկ համակարգչից օգտվում է մի քանի աշակերտ: Պատշաճ կերպով կազմակերպված ուսման և աշխատանքային պայմաններում համագործակցային ճանաչողական գործընթաց կազմակերպելու համար բավարար է մեկ կամ երկու անհատական համակարգիչ: Տիպիկ SS սենյակն՝ իր սահմանափակ տարածքով և աշակերտական սեղանների ոչ ճկուն դասավորվածությամբ չի նպաստում ժամանակակից տեղեկատվական և հաղորդակցման սարքերի ինտեգրմանը կրթական գործընթացին: օգտագործելով տարբեր ձևեր և տարատեսակ եղանակներ: Կառուցողական մանկավարժության համար անհրաժեշտ են ուսման հատուկ պայմաններ, որոնք հնարավորություն կտան աշակերտներին համագործակցելու և օգնություն ցուցաբերելու միմյանց: Նրանք կարող են օգտվել մի շարք գործիքներից և տեղեկատվության աղբյուրներից՝ իրենց խնդիրները լուծելու և նպատակին հասնելու համար:



Մեթոդները բաղկացած են հնարներից և վարժություններից:

1.1 «Պատմել» - այս մեթոդը կիրառվում է ուսուցման բոլոր փուլերում: Պատմելը սկսվում է ներածությունով և ավարտվում ամփոփումով: Շարադրվում կամ պատմվում է ուսումնական նյութի բովանդակությունը՝ խստագույնս պահպանելով սիստեմատիկության և հաջորդականության սկզբունքը: Պատմելու ընթացքում վարպետորեն առանձնացվում է նյութի գլխավոր տարրերը: Գիտելիքները հիմնավորվում է օրինակներով, գիտական փաստերով, համապատասխան իլյուստրացիաներով և դեմոնստրացիաներով: Այս մեթոդի կիրառման ժամանակ գործադրվում է մի շարք հնարներ, օրինակ՝ «համեմատության», «համադրության», «սովորողների ուշադրության ակտիվացման» և այլն: Այս մեթոդը հիմնականում կիրառվում է դպրոցական ուսուցման ընթացքում:⁵

1.2 «Ղասախոսություն» - մեթոդը կիրառվում է ծավալուն, բարդ ուսումնական նյութերը քննելիս, հատկապես, եթե այն ընդգրկում է պրոբլեմներ (օրինակ՝ պրոբլեմային դասախոսություն) և ունի շատ ցայտուն տրամաբանական կառուցվածք ու պահանջում է կատարել ընդհանրացումներ, ենթադրում է ապացուցումներ, հիմնավորումներ և այլն: Այս մեթոդը ենթադրում է դասախոսության պլանի հստակորեն կազմում, հարցերի տրամաբանական կապերի պահպանում, դիտազննական պարագաների, ուսուցման տեխնիկական միջոցների ճիշտ ընտրություն և այլն:

1.3 «Զրույց» - մեթոդի էությունն այն է, որ ուսանողները պատասխանում են նախօրոք կազմված հարցերին: Այս մեթոդը կիրառվում է նոր նյութի հաղորդման, ամրապնդման, ստուգման ժամանակ: Նոր դասանյութի ավելի արդյունավետ անցկացման համար ուսանողներին նախապես հանձնարարվում է ուսումնասիրել

⁵ www.wikipedia.org.



նյութը, որը վերլուծվելու է, բացատրվելու: Զրույցի մեթոդի հիմնական գործառնությունը մոտիվացիան է:

1.4 «Բանավեճ» – այս մեթոդը կիրառվում է ուսանողների իմացական հետաքրքրությունները ակտիվացնելու, կարծիքները, համոզմունքները, տեսակետները հայտնելու, հարցապնդումներ անելու, ճշմարտությունն ի հայտ բերելու համար: Բանավեճի միջոցով արժևորվում, գնահատվում են սովորողների գիտելիքները, 2 կարողություններն ու հմտությունների չափը, ծավալը, զարգացման աստիճանը: Առանց կայուն և խորը գիտելիքների դժվար է ակտիվորեն մասնակցել բանավեճին, համոզել ընդդիմախոսներին: Բանավեճը սովորողներից պահանջում է ճիշտ ձևակերպել իրենց մտքերը, համբերատար լսել ընկերների պատասխանները, կարծիքները, հարցապնդումները, հակադրվելու դեպքում բացառել վիրավորանքը: Բանավեճը կարող է լինել ազատ, երբ այն զարգանում է ազատ, և ղեկավարվող, երբ այն զարգանում է որոշակի ուղղությամբ:

2. Զննական մեթոդներ

Զննական են համարվում այն մեթոդները, որոնց միջոցով սովորողների կողմից ուսումնական նյութի յուրացումը կախում ունի դիտազննական պարագներից և ուսուցման տեխնիկական միջոցներից: Զննականությունը հնարավորություն է ընձեռում օբյեկտներին, առարկաներին ծանոթանալ բնական վիճակում և կամ սիմվոլների միջոցով:

2.1. «Իյուստրացիա» - այս մեթոդը խնդիր է դնում կամ պահանջում է ուսուցման գործընթացում ուսումնական նյութը հաղորդելիս կիրառել դիտազննական պարագաներ՝ քարտեզներ, պաստառներ, գծագրեր, նկարներ, դիմանկարներ և այլն: Դրանց ցույց տալն ու վերլուծությունը կոչվում է իյուստրացիա: Ուսուցման արդյունավետությունն ավելի բարձր է լինում այն դեպքում, երբ պատմելը, գրույցը,



բացատրությունը, դասախոսությունը զուգակցվում են իլյուստրացիային, այսինքն՝ ցուցադրմանը:

2.2. «Դեմոնստրացիա» - այս մեթոդի էությունը նույնպես ցուցադրումն է:

Օրինակ՝ ցուցադրվում են գործիքներ, սարքեր, տեխնիկական միջոցներ, զանազան պրեպարատներ, ֆիլմեր և այլն: Դեմոնստրացիայի դեպքում ցուցադրմանն ուղեկցում է շարժումը և ահա ի տարբերություն իլյուստրացիայի, այն կոչվում է դեմոնստրացիա: Սակայն իմաստը մնում է նույնը՝ ցուցադրումը: «Իլյուստրացիա, դեմոնստրացիա» հասկացությունների բաժանումները պայմանական են: Առանձին զննական միջոցներ կարելի է դասել իլյուստրացիայի խմբում և՛ հակառակը:

3. Գործնական մեթոդներ

Գործնական աշխատանքները կազմակերպվում և իրագործվում են լայնածավալ թեմաներ ուսումնասիրելուց հետո: Դրանք կրում են ընդհանրացնող բնույթ: Վարժություններն իրենց բնույթով բաժանվում են բանավոր, գրավոր, գրաֆիկական, ուսումնական-աշխատանքային վարժությունների, գործնական աշխատանքների (օրինակ՝ «Մանկավարժություն»-ից): Դրանցից յուրաքանչյուրն իրականացնելիս սովորողները կատարում են մտավոր և գործնական աշխատանք, որոնք փոխկապակցվում են՝ կանխանշած նպատակին հասնելու համար: Մրանք կատարվում են ուսումնական բոլոր առարկաներից, ուսուցման գործընթացի բոլոր փուլերում: Բոլոր տեսակի 3 վարժությունների բնույթը և մեթոդիկական կախում ունի տվյալ ուսումնական առարկայի առանձնահատկություններից: Գործնական մեթոդը կարելի է իրագործել հետևյալ հնարների գործադրմամբ. 1. առաջադրանքի պլանավորում, 2. առաջադրանքի կատարում, 3. կատարման ընթացքի խթանում, 4. վերահսկողություն, 5. կատարված գործնական աշխատանքի արդյունքների վերլուծություն, թերությունների, սխալների հայտնաբերում:

4. Լաբորատոր մեթոդներ



Ավանդաբար այս մեթոդները դասվում են գործնական մեթոդների շարքին և վերաբերում են առանձին դասընթացների, օրինակ՝ «Ֆիզիկա», «Քիմիա»:

4.1. «Լաբորատոր» – այս մեթոդը փոխկապակցված գործողություններով լուծում է կրթական, դաստիարակչական և զարգացման խնդիրներ: Գործողությունները կրում են գործնական բնույթ:

4.2. «Փորձեր» - մեթոդը ենթադրում է, որ գործնական աշխատանքները կատարում են սովորողները՝ կիրառելով հատուկ գիտելիքներ:

5. Ինդուկտիվ և դեդուկտիվ մեթոդներ

5.1. «Ինդուկտիվ» - այս մեթոդի կիրառումը օգնում է բացահայտել ուսումնասիրվող նյութի բովանդակության տրամաբանությունը, ինչպես նաև նրա դինամիկան: Դա կատարվում է մասնավորից դեպի ընդհանուրը տանող ուղիով: Այս մեթոդը շատ օգտակար է կիրառել հատկապես գործնական առաջադրանքներ կատարելու համար մաթեմատիկայի, ֆիզիկայի ուսուցման ընթացքում:

5.2. «Դեդուկտիվ» - մեթոդը զարգացնում է սուբյեկտի վերացական մտածողությունը, արագացնում ուսումնասիրության ընթացքը: Տեսական, գործնական առաջադրանքներ կատարելիս օգնում է հայտնաբերել պատճառահետևանքային կապեր: Բացահայտում է նյութի բովանդակության տրամաբանությունը՝ ընդհանուրից դեպի մասնավորը տանող ուղիով:

6. Բացատրական-ցուցադրական մեթոդ

«Բացատրական-ցուցադրական» մեթոդի էությունն այն է, որ դասավանդողը սովորողներին հաղորդում է պատրաստի գիտելիքներ, իսկ սովորողները այդ գիտելիքները ամրակայում են իրենց հիշողության մեջ՝ հենվելով դիդակտիկ նյութերի վրա: Այս մեթոդի առավելությունը ժամանակի տնտեսման մեջ է:

7. Պրոբլեմային ուսուցման մեթոդներ



«Պրոբլեմային ուսուցման» մեթոդները ենթադրում են դասավանդողի կողմից պրոբլեմի առաջադրում, ձևակերպում, լուծում՝ սովորողներին ցույց տալով դրանց լուծման ուղիները: Այս մեթոդի էությունը կամ նշանակությունը այն է, որ դասավանդողը ցուցադրում է գիտական ճանաչողության, պրոբլեմի լուծման նմուշները: Կարելի է առանձնացնել պրոբլեմային ուսուցման մեթոդների երկու տարատեսակ՝

1. դասավանդողի կողմից գիտելիքների պրոբլեմային շարադրման մեթոդ,
2. սովորողների ինքնուրույն ճանաչողական գործունեության կազմակերպման մեթոդ:

8. Վերարտադրողական-(ռեպրոդուկտիվ) մեթոդ Վերարտադրողական (ռեպրոդուկտիվ) մեթոդը ենթադրում է դասավանդողի կողմից ուսումնական նյութի մշակում, հաղորդում: Ուսումնառողը ինքնուրույն նախապես կատարում է առաջադրանքները, հանձնարարությունները: Ուսումնասիրում է դասագրքի, դասախոսությունների համապատասխան տեքստը, օժանդակ նյութերը և ուղղակի վերարտադրում:

9. «Դասախոսություն-քննարկում» - այս մեթոդը հանձնարարելի չէ նոր տեղեկատվության հաղորդման համար: Այն առավել արդյունավետ է սովորողներին արդեն հայտնի թեմաների շուրջ զրուցելու և դրանց իմաստավորման գործում սովորողներին օգնելու անհրաժեշտության դեպքում:

10. «Մտազրոհ» (brainstorm) – խմբային աշխատանքի պարզագույն, բայց շատ արդյունավետ մեթոդ է: Այս մեթոդը մտքերի տարափ են անվանում, քանի որ հաճախ խրախուսվում են պարզապես ուսումնասիրվող նյութին այս կամ այն կերպ առնչվող բառեր թվարկելն ու գաղափարներ արտահայտելը: Խմբի անդամների միջև կոնկրետ խնդիր է դրվում. նրանցից յուրաքանչյուրն արտահայտում է սեփական տեսակետները՝ առանց որևէ մեկնաբանության կամ գնահատական տալու փորձի:



«ԱՐՄԻՆԻՍՏ ԷՍ ԳԵ»

Բոլոր մտքերն ու գաղափարները գրանցվում են մաքուր թղթի կամ գրատախտակի վրա:

11. «Վենի դիագրամ» - այս մեթոդը կարելի է օգտագործել նյութի ամփոփման և ընդհանրացման ժամանակ՝ գաղափարները, երևույթները, անձերին միմյանց հակադրելու կամ դրանց ընդհանրությունները ցույց տալու նպատակով: Այն կառուցվում է երկու կամ ավելի շրջանաձև պատկերների միջոցով, որոնք հատման մեծ մակերես ունեն կենտրոնում, որտեղ նշվում են ընդհանրությունները:

12. «Վեր-որոնում» - հետազոտության վրա հիմնված ուսումնական գործունեություն է, որի ընթացքում սովորողների ձեռք բերած գիտելիքները, տեղեկատվությունը հիմնականում ստացվում են ինտերնետային աղբյուրներից՝ կայքեր, հանրագիտարաններ, ուսումնական ռեսուրսներ, գրադարաններ, ֆորումներ: Այս մեթոդով ուսուցումը ենթադրում է ելակետային մի հարցադրում կամ խնդիր, որը գործնական, ոչ թե տեսական պատասխանի կամ լուծման կարիք ունի:

13. «Դեպքի ուսումնասիրություն» - մեթոդը համեմատաբար նոր է: Դրա կիրառման ժամանակ մասնակիցներին ներկայացվում է իրական կամ երևակայական իրավիճակների (հանգամանքների, դեպքերի, դիպվածների) մի շարք, որի ուսումնասիրման, քննարկման, վերլուծության ուղղությամբ այնուհետև անհրաժեշտ է լինում տևական աշխատանք կատարել:

14. «Խճանկար» (Ջիգս) –անվանումն ինքնին բնութագրում է մեթոդը: Սովորողները համագործակցային խմբերով միևնույն թեմայի շուրջ աշխատում են առանձին ուղղություններով: Բոլոր խմբերի գործունեության արդյունքները միավորվում և դառնում են ողջ դասարանի սեփականությունը: Այսպիսով՝ նյութն ուսումնասիրվում է հատվածաբար կամ տարբեր կողմերից, ապա պատկերն ամբողջանում է, երբ միավորում են խմբային աշխատանքների արդյունքները:



15. «Շրջագայություն պատկերասրահում» - այս մեթոդը «Խճանկար» մեթոդի տարատեսակ է: Նպատակն է՝ փոխանակել տեղեկություններ, մշակել գաղափարներ և կատարել անդրադարձ, ինչպես նաև զարգացնել լսելու, ինքնուրույն աշխատելու, քննադատաբար և ստեղծագործաբար մտածելու, ցածրաձայն խոսելու, աշխատանքի արդյունքը ներկայացնելու հմտություններ:

16. «Սովորողների թիմային առաջադիմության մեթոդ» - այս մեթոդի կիրառումը ենթադրում է, որ դասավանդողը սովորողներին ամեն շաբաթ կամ որոշակի պարբերականությամբ ուսումնական նոր նյութ է մատուցում բանավոր դասախոսության կամ գրավոր տեքստերի միջոցով: Այդ նպատակով սովորողներին բաժանում է 4-5 անդամից բաղկացած ուսումնական խմբերի, որոնցում ընդգրկվում են ինչպես ուժեղ, այնպես էլ միջին և թույլ կարողությունների տեր մասնակիցներ: Թիմի անդամները սկզբում կարդում են թերթիկների վրա զետեղված առաջադրանքը, սերտում հանձնարարված նյութերը, ապա օգնում միմյանց ավելի լավ յուրացնել տվյալ նյութը մեկը մյուսին ուսուցանելու, հարցեր տալու և թիմի անդամների միջև քննարկումներ ծավալելու միջոցով:

17. «Խմբային հետազոտության մեթոդ» - այս մեթոդի էությունը հետևյալն է. դասավանդողը լսարանը բաժանում է 5 կամ 6 անդամ ունեցող խմբերի: Վերջիններս թեմաներ են ընտրում իրենց ուսումնասիրության համար, աշխատում, այնուհետև զեկույց են պատրաստում և ներկայացնում ամբողջ լսարանին:

18. «Խաղեր» - Խաղային ուսուցումը ենթադրում է տարբեր հիմնախնդիրների լուծումներ՝ կապված մասնագիտական գործունեության, մարդկային փոխհարաբերությունների, անձնական դժվարությունների հետ: Խաղի մեջ առարկայանում են իրավիճակներն ու իրադրությունները, գործունեության որոշակի ձևը, հասարակական փորձը, իսկ արդյունքում կատարելագործվում է սեփական վարքագծի վերահսկողությունը: Դիդակտիկական նպատակներով կարող են



կիրառվել տարբեր տեսակի խաղեր՝ դերային, նմանակող, գործնական, գործառական և այլն:

Ուսման կազմակերպման եղանակները՝

1. Խմբային աշխատանք

Խմբերում ընդգրկված աշակերտների թվի նշանակությունը

Ամենավոքը խմբում պետք է ընդգրկված լինի առնվազն 3 աշակերտ, քանի որ դրանից պակաս լինելու դեպքում աշխատանքը խմբում դառնում է գույգերով կամ անհատական: Լավագույն տարբերակն այն է, երբ խմբում ընդգրկված է 4 աշակերտ. այս դեպքում յուրաքանչյուր մասնակից կարող է ունենալ իր ենթաառաջադրանքը, և, ավելին, անհրաժեշտության դեպքում խմբի անդամներին կարելի է հեշտությամբ բաժանել գույգերի: Վեցից ավելի աշակերտներից բաղկացած խմբերը դժվար է կառավարել, քանի որ որոշ աշակերտներ կարող են որոշել չմասնակցել խմբի աշխատանքներին և նույնիսկ խանգարել մյուսներին:⁶

Միատարր և բազմատարր կառուցվածք ունեցող խմբերի

ձևավորման մոտեցումները

Միատարր կառուցվածք ունեցող խմբերի առանձնահատկությունն այն է, որ՝

- տվյալ առարկայում աշակերտների ընդունակություններն ու հետաքրքրությունները գրեթե նույնն են:

Բազմատարր կառուցվածք ունեցող խմբերի առանձնահատկությունն այն է, որ՝

- տվյալ առարկայում աշակերտների ընդունակություններն ու հետաքրքրություններն ակնհայտ տարբեր են:

⁶ www.wikipedia.org.



Վերջին դեպքում կարող է օգտակար լինել դերերի բաշխումը՝ ապահովելու, որ յուրաքանչյուր անդամ, իր ընդունակությունների սահմաններում, ներգրավվի խմբի աշխատանքներում: Նման խմբային աշխատանքն ապացուցում է այն տեսությունը, որ աշակերտները կարող են շատ արդյունավետ կերպով սովորել միմյանցից:

Դերերի բաշխումը խմբում

Արդյունավետ համագործակցության հիմքում ընկած է աշխատանքի հավասար բաժանումը և փոխադարձ պատասխանատվությունը: Դրան կարելի է հասնել խմբի առանձին անդամներին որոշակի դեր/առաջադրանք տալով:

Խմբում առաջադրանքներ և պարտականություններ բաշխելը կարող է ունենալ երկակի ազդեցություն՝

մի կողմից այն ամրապնդում է գոյություն ունեցող շփման հմտությունները, մյուս կողմից այն ստեղծում և զարգացնում է այլ հմտություններ:

Քանի որ սկզբնական շրջանում աշակերտները չեն կարող ինքնուրույն կազմակերպել իրենց աշխատանքը, արդյունավետ կլինի, որ ուսուցիչը բաշխի դերերը (ղեկավար, քարտուղար, փաստաթուղթ կազմող, զեկուցող): Այս եղանակով մի կողմից հնարավոր է ժամանակ խնայել, մյուս կողմից յուրաքանչյուր երեխայի հանձնարարվում է իր ընդունակություններին առավել համապատասխան աշխատանք: Այնուամենայնիվ, աշակերտներին պետք է նաև նոր դերերում իրենց փորձելու հնարավորություն տրվի: (Օրինակ՝ այն աշակերտը, որը սովորաբար առաջնորդի դեր է ստանձնում, պետք է սովորի հարգել և համագործակցել առաջնորդի դեր ստանձնած այլ աշակերտների հետ, իսկ ամաչկոտ աշակերտները պետք է փորձեն հրապարակավ արտահայտվել:)



Չնայած, որ բարձր դասարաններում դերերի տարբերությունն այնքան էլ կարևոր չէ աշակերտների համար, այնուամենայնիվ պատասխանատվության զգացումը զարգացնելու նպատակով օգտակար կլինի աշակերտներին հանձնարարել դերեր՝ ըստ ուսումնասիրվող առարկայի:

Խումբ ձևավորելու եղանակները

Խումբը կարող է ձևավորվել պատահականության սկզբունքով, աշակերտների ցանկությամբ կամ էլ ուսուցչի կողմից՝ միտումնավոր կերպով: Ակնհայտ է, որ վերջին տարբերակն ուսուցչին հնարավորություն կտա հասնելու իր դիդակտիկ նպատակներին, քանի որ այս դեպքում խմբում հնարավոր է ապահովել արդյունավետ համագործակցության բոլոր պայմանները՝

- ընդունակությունը և գիտելիքը,
- անձնական համակրանքը,
- գենդերային հավասարակշռությունը,
- էթնիկ խմբերի ներկայացուցիչների մասնակցությունը:

Խմբային աշխատանքի առավելությունները

Լավ կազմակերպված խմբային աշխատանքը մեծապես ազդում է աշակերտների անհատականության և արժեքային համակարգի ձևավորման վրա՝

- միասին մտածելը,
- հարմարվելու ունակությունը,
- համագործակցությունը,
- փաստարկներ բերելու/համոզելու ունակությունը,
- այլոց նկատմամբ հարգանքը, տարակարծության նկատմամբ հանդուրժողականությունը,
- խմբի մաս լինելու փորձը:



2. Զույգերով աշխատանք

«Զույգերով աշխատանք» և «Միասին սովորող զույգեր» հասկացությունները

- Զույգերով աշխատանքի ընթացքում, նույն ընդունակություններով երկու աշակերտ աշխատանքը կատարում են միմյանց հետ համագործակցելով: Սա միատարր կառուցվածք ունեցող զույգի տարբերակն է:
- Միասին սովորող զույգերի դեպքում աշակերտներից մեկն իր ընդունակություններով զիջում է մյուսին: Ավելի բարձր ընդունակություններով աշակերտը կատարում է «ուսուցչի» դերը (ուսանում ուսուցանելու ընթացքում): Սա բազմատարր կառուցվածք ունեցող զույգի տարբերակն է:

Զույգերի տեսակները

Համագործակցող զույգերը կարող են մի շարք գործառույթներ կատարել (կարդալ, գրել, հաշվել, մտածել):

Զույգեր ձևավորելու եղանակները

Զույգերը կարող են ձևավորվել մշտապես կամ ժամանակավորապես, կամ էլ որևէ առարկայի շուրջ (օրինակ՝ մաթեմատիկայի դասաժամի համար կազմված զույգեր) միասին աշխատելու նպատակով:

Զույգերով թե՛ խմբային աշխատանք

Փորձը ցույց է տալիս, որ 6–10 տարեկան աշակերտներն առավել արդյունավետ են աշխատում զույգերով, երբ երկուսն էլ հավասարապես համագործակցում են:

3. Անհատական աշխատանքը

Անհատական աշխատանքի հասկացությունը



Յուրաքանչյուր աշակերտ ունի տարբեր ընդունակություններ և սովորելու անհատական ոճ: Այս փաստը պետք է հաշվի առնել չափազանց բարձր կամ չափազանց թույլ ընդունակություններով աշակերտների պարագայում: Աշակերտի անհատական ընդունակությունները զարգացնելու համար կազմված ծրագիրը կոչվում է անհատականացում: Այն հատկապես օգտակար է շնորհալի երեխաների հետ աշխատելիս, կամ երբ անհրաժեշտ է, որ որոշ աշակերտներ առաջադիմության առումով հետ չմնան իրենց դասընկերներից:

Ինքնուրույն և անհատականացված աշխատանքի տարբերությունը

Ինքնուրույն աշխատանքը կարող է կատարվել անհատական եղանակով, զույգերով կամ խմբային աշխատանքի արդյունքում: Կարևորն այն է, որ աշակերտներն ինքնուրույն աշխատեն: Անհատականացված աշխատանքի դեպքում առաջադրանքը մշակված է տվյալ անհատի կարիքներին համապատասխան:



ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, ելնելով վերը նշվածից, կարելի է գալ հետևյալ համոզմանը, որ մանկավարժական հետազոտությունների իրականացման գործընթացում, շատ կարևոր է մեթոդաբանական գիտելիքների իմացությունը: Այն հնարավորություն է տալիս ուսուցչին, դասը ավելի արդյունավետ կազմակերպել: Կիրառելով զանազան մեթոդներ, ուսուցիչը կարող է երեխաների համար տվյալ դասը առավել բազմաբովանդակ դարձնել: Բնականաբար լավ կազմակերպված դասն էլ ինքնին խոսում է կրթության որակի բարձրացման մասին: Ներկայումս, ինչպես գիտենք կրթության ոլորտում տեղի են, ունենում ինովացիոն գործընթացներ, որոնք նույնպես, նպատակաուղղված են, արդյունավետ կրթության կազմակերպմանը:

Առհասարակ, ներկայիս ուսուցումը կազմակերպվում է այնպես, որ այն դառնա աշակերտակենտրոն: Այսինքն, երեխան պետք է կարողանա ,դուրս գալ պրոբլեմային իրավիճակից, առաջադրված խնդիրները հաղթահարի:



Գրականության ցանկ

1. Ասատրյան Լ., Հակոբյան Գ., Մանկավարժական հետազոտությունների մեթոդաբանություն, Ե., 2011 թ., 178 էջ:
2. Краевский, В. В. Методология педагогического исследования: Пособие для педагога-исследователя / В. В. Краевский. - Самара, 1994.
3. Скаткин М.Н. Методология и методика педагогических исследований (В помощь начинающему исследователю). – М.:Педагогика, - 1986. -152с.
4. www.wikipedia.org
5. Ուսուցման արդյունավետ հնար, Երեւան Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ, Հայաստան 2020